



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՅՈՒՄ 1870 ԱՄԻՆ

ՆԻՍ ԵՐԵՍՈՒՆԵԻՆՈՂՆԵՐՈՐԴ

21 ՅՈՒՆՈՒԱՐ 1872



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Բ. Յ. ԴԻՐԲՃԵԱՆ

— 1872 —

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՔՐՈՂԱԿԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՅԵՐԱՅԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՅԵՐԱՅԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

1872



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՅԵՐԱՅԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

1872

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ԲԱՅՈՒՄ 1870 ԱՄԻՆ

ՆԻՍՏ ԼԷ

21 ՅՈՒՆՎԱՐ 1872

ՆԱԽԱԳԱՀ. — ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԲ

ԱՏԵՆԱՊԵՏ. — ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Բ. ԷՖ. (Առժամանակեայ կարգեալ)

ԿԱՐԳ ԽՆԴՐՈՑ

- 1° Վաւերացումն ընտրութեան նորընտիր երեսփոխանաց :
- 2° Ընտրութիւն Ազգ. Վարչութեան կրօն. ժողովոյ :
- 3° Ատենական կանոնադրութիւն :

Ատենը բացուեցաւ ժամը Տին ընդ առժամանակեայ ատենապետութեամբ երիցազոյն երեսփոխան Ղազարոսեան Գրիստոստուր էֆ. ի եւ ընդ առժամանակեայ ատենադպրութեամբ կրտսերազոյն երեսփոխան Փափազեան Ստեփան էֆ. ի. զի Կիւանին անդամներէն ոչ ոք ներկայ էր :

Ներկայ երեսփոխանաց թիւն էր 38 որ հետըզհետէ բազմանալով ՅԱ յանգեցաւ :

Ատենապետ էֆ. անձնական տկարութեան պատճառաւ ժողովոյ ներկայ նստէն բացակայ զանուելու ստիպեալ երեք երեսփոխանաց անուններն յիշելէ յետոյ՝ ծանուցանելով թէ 12 երեսփոխանաց ստորագրութեամբ առ Ամեն. Նախագահն եւ Քաղ. ժողովն ուղղեալ հարցում մը կայ Կիւանին վրայ, ըստ օրինի ներկայացեալ, Ատենադպիր էֆ. կարգաց զայն ՚ի լուր

ժողովոյ, որոյ պատճէնն անաւասիկ :

Վսեմափայլ Ատենապետ Ընդհ. ժողովոյ .
 Հետեւեալ հարցումը կը խնդրեմք որ ներկայացնէք անպատճառ այս աւուր Ընդհ. ժողովոյ մէջ, առ Ամեն. Սրբազան Պատրիարքն եւ առ Քաղ. ժողովն :

Հարցում. — Ազգային թերթերը վեհափառ կաթողիկոսին կողմանէ առ Ս. Պատրիարքն ուղղեալ հեռագրի մը պատճէնը կը հրատարակեն, պտո՞յգ է թէ՛ անստոյգ : Այդ հարցումն ուղղեմք, եւ յառաջ քան զայլ ամենայն խնդիր՝ անոր պատասխանը լսել ստիպողական կը դատեմք :

21 Յունվար 1872

- (Սքոթ .) 0. Խօճասարեան
- » Թ. Պէկ.
- » Լ. Ս. Ալաճաճեան

- (Սորո.) Պօղոս Հ. Ժամակոչեան
- » Յ. Արշակ
- » Մ. Մամիկոնեան
- » Մ. Աճէմեան
- » Բ. Քիւրքճիպաշեան
- » Մահտ. Յ. Փափաղեան
- » Պօղոս ձիւղանեան
- » Յ. Կ. Եէմէնիճեան
- » Հ. Յակոբ Սարգիսեան

գուժենէն կախումն ունի ստիպողականութիւնը . ՊԵՎԵԱՆ Թ. ԷՖ. — Ձեռք կրնար ստիպողականութեան վրայ վիճել, վասն զի մեր հարցումն դեռ պատասխան չընդունեց. սակայն չեմք կրնար նաեւ ստիպել Արքայան Հայրը որ անմիջապէս պատասխանէ մեր հարցման, զի նա իրաւունք ունի իւր պատասխանը այժմ չը տալու :

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ — Հարցում մը կուղղեն ինձ, իմ պարտքս է պատասխանել եւ պիտի պատասխանեմ. սակայն այն պայմանաւ որ օրուան կարգէ դուրս այս հարցման խնդիրը ներկայ նստին բոլոր ժամերը չգրաւէ, զի օրուան խնդիրը կրնայ ընտրութիւնը . կարեւորագոյն է եւ ամենայն ստիպողականութիւն ունի անմիջական լուծումն պահանջելու համար :

ՊԵՎԵԱՆ Թ. ԷՖ. — Եթէ Արքայան Հայրը մեր հարցման պատասխանէ այսօր, իւր պատասխանին հետեւութեամբ ժողովը այդ կէտը պիտի կրնայ որոշել :

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ — Էջմիածնայ Վեհափառ Կաթողիկոսն . . .

ՕՏԵԱՆ Գ. ԷՖ. — (Ընդհանրութիւն) Խօսք կուզեմ հարցման ապօրինաւոր կերպիւ ժողովոյ ներկայանալուն վրայ խօսք կուզեմ :

Մի քանի նստարաններու վրայէն, մասնաւորապէս Օգսէն էֆ. — Բայն Նիւ-Էն-Սըբ-դաշ Խոսք, պէտք է որ Նիւ-Էն-Սըբ-դաշ :

ՕՏԵԱՆ Գ. ԷՖ. — Սակայն ժողովը չորոշեց դեռ այդ հարցման խնդրով զբաղիլ :

Հարցումն ուղղող երեսփոխանք կը պնդեն թէ՛ Նախագահ Արքայան խօսելէ յետոյ կրնայ Օտեան էֆ. խօսք առնուլ, մինչդեռ Օտեան էֆ. հարցման օրինաւորապէս չներկայանալուն վրայ կը հրաւիրէ ժողովոյ ուղղողութիւնը :

Ատենապետ էֆ. նկատողութեան կառնու Օտեան էֆ. ի դիտողութիւնը եւ կը հրաւիրէ զանի խօսիլ :

ՕՏԵԱՆ Գ. ԷՖ. — Տասներկու երեսփոխանք հարցում մը կուղղեն Ս. Պատրիարքին եւ Վարչութեան, Նախ պէտք է որ ժողովը ընդունի այդ հարցումը եւ խնդրոց կարգն անցնէ. առանց ժողովոյ որոշման նա ոչ ստիպողականութիւն ունի եւ ոչ իսկ յուզելի խնդրոց կարեւորութիւնն : Երբ այդ հարցումն այս օրինաւորութեան շաւղէն չանցած իրր օրուան խնդիր

ներկայանայ, ժողովոյ մեծագոյն մասին վրայ փոքրագոյն մասէն ներգործեալ բռնաբարութիւն մ'եղած կը լինի :

Սրբազան Նախագահը պայման մը դրաւ, այն ալ իրաւացի չըթուիր ինձ : Եթէ պատասխանը լսելէ ետեւ ժողովը ուղէ օրուան խնդիր ընել այդ հարցումը, ժողովոյ իրաւունքն է այն եւ կարելի չէ արգելուլ :

ՍՐՎԱՃԵԱՆ Յ. ԷՖ. — Կը ցաւիմ որ պիտի պարտաւորիմ խօսքս Գիւանի դէմ ուղղել . Գիւանն այդ հարցումն ընդունած ժամանակ, անոր օրուան կարգն անցնիլը քուէի դնելու է նախ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Գիւանն ըրաւ ինչ որ անկ էր ըստ օրինի, ուղղեց հարցումը կանխաւորու որ ուղղեալ էր եւ ապա ժողովոյ ներկայացուց . հիմայ եթէ ժողովը կուզէ զայն վիճարանութեան ենթարկել, պէտք է որոշել իւր քուէովը :

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Խնդիրն ուրիշ կերպով կը մտնուի. հարցումն ուղղող երեսփոխանական ժողովը չէ մեր Վեհափառ Կաթողիկոսը խօսք է ուզեր ընդհ. ժողովոյ մէջ. մեք ալ կը հարցնենք Արքայան Նախագահին թէ՛ Վեհափառ Կաթողիկոսը խօսք ուզե՞ր է, թէ՛ ոչ : Օտեան էֆ. երբ իւր ատենապետութեան ժամանակ Ս. Նախագահը խօսք ուզեր, անմիջապէս « խօսքը Ձերն է » կրտէր, հիմայ որ Վեհ. Կաթողիկոսը խօսք կուզէ, նա որ մեր բոլոր ժողովականացս բարձրագոյնն է, պէտք է որ խօսք տրուի իրեն :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Մէն մի երեսփոխան իրաւունք ունի ո եւ է հարցումն ուղղել, սակայն միշտ ժողովոյ հաւանութեամբ . թէպէտ դեռ ատենական կանոնագրութիւն չունիմք, սակայն ընդհանուր կանոնն այսպէս կը պահանջէ :

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Ընդհ. ժողովը եւ Արքայան Պատրիարքն ամբաստանեալ են Վեհափառ Կաթողիկոսէն, կը հարցնեմք թէ ըստոյզ է այս տարածայնութիւնը. ահա մեր հարցումը :

ՕՏԵԱՆ Գ. ԷՖ. — Ուրեմն ստիպողականութիւն կայ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ստիպողականութեան վրայ ժողովոյ կարծիքն իմանալու համար քուէի պիտի դնեմ :

ՊԵՎԵԱՆ Թ. ԷՖ. — Քանի որ Արքայան Հայրը խօսք առաւ, պէտք է շարունակէ իւր խօսքը :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Խնդիրն ստիպողականութեան վրայ է, առանց այս կէտը որոշելու եւ ոչ մէկու մը խօսք կրնամ տալ :

Ատենապետ էֆ. ի այս խօսքին վրայ Պէկեան էֆ. օտք ենելով կը բողոքէ Գիւանի դէմ եւ կը պնդէ որ Նախագահ Արքայանը խօսքը շարունակէ . իւր ձայնն արձագանք կը գտնէ մէկ երկու երեսփոխաններէ . թեթեւ շշուկ մը կը յառնէ ժողովոյն մէջ եւ բարեկարգութիւնը պահ մը կը խանգարի :

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ — (Ընդհանրութիւն) Երկար եւ ունայն վիճարանութեանց տեղի չտալու համար, ահա ես իմ պատասխանս կուտամ :

Ստոյգ է որ մեք էջմիածին մ'ունիմք եւ նորա Աթոռոյ վրայ մի կաթողիկոս, որոյ ընտրութիւնը հոս կըլլայ . ասոր տարակոյս չկայ : Էջմիածնայ Կաթողիկոսը շատ պարագաներու մէջ թղթակցութիւն ունեցած է եւ ունի ընդ իս, այս անգամ նաեւ իւր մէկ հեռագրով կը հարցնէ ինձ թէ՛ ստոյգ է որ իմ Նախագահութեան ներքեւ Ընդհ. ժողովոյ մէջ ընդդէմ աւանդութեանց Հայաստանեայց Եկեղեցւոյ որոշումներ տրուած են : Ես ալ, իչր Վարդապետ Հայաստանեայց Եկեղեցւոյ, իրր եպիսկոպոս ձեռնադրեալ էջմիածնայ Վեհափառ Կաթողիկոսէն իւր հարցմանց կէտ առ կէտ պատասխանելով իւր կասկածները փարատելու համար պէտք եղած բացատրութիւնները տուած եմ : Այդ հարցումն ուղղակի ինձ եղած էր, ես ալ ըստ այնմ պատասխանած եմ, ուստի եւ բնաւին Ընդհ. ժողովոյ չվերաբերիր եւ ձեզ համար ստիպողականութիւն չունի :

ՊԵՎԵԱՆ Թ. ԷՖ. — Ահա Նախագահ Արքայանն հաճեցաւ մեր հարցման պատասխանը տալ . հիմայ ես ալ ստիպողականութիւն ըլլալուն կամ չըլլալուն վրայ պիտի խօսիմ, այնուհետեւ կըրնամք քուէի դնել :

Գառն կացութեան մէջ կը գտնուիմք արդարեւ, երեսփոխան էֆէնտինե՛ր, զի կը նշմարեմ որ Ընդհ. ժողովը ծանր վտանգի մէջ կը ծածանի . . .

Մի քանի նստարաններու վրայէն. — Միւսն յնճը, միւսն յնճը իւր-իւրէն : Ի՞նչ է ձեռքը այդ իւր-իւրէն . որո՞ւն է ձեռքը մէջ է :

Ձայն մի, պոռալով. — Հարցում մը չէր լինի . . .

դարձնելու ընդհանրությունը, որով ինքնուրույն է յեր
դարձնելու ընդհանրությունը:

Մի քանի ձայներ. — Քոնի քրեյն և ինքնուրույն
դարձնելու ընդհանրությունը:

Յուզում կը տիրէ ժողովոյն մէջ, Ատենապետ
էֆ. կը ջանայ բարեկարգութիւնը վերահաս-
տատել եւ կը հրաւիրէ զՊէկեան էֆ. խօսքին
թեղը ձեռք առնուլ:

Պէկեան Թ. Էֆ. — (Շքանակէլ) Ձայն խեղ-
դելն աղէկ բան չէ, ընդդիմախօս էֆէնտիններ,
կազմակերպութիւնը որ ամեն երեսփոխան ազա-
տորէն իւր կարծիքը կարող ըլլայ յայտնել:

Պահ մ'առաջ կըսէի թէ՛ ընդհ. ժողովը ծանր
վտանգի մէջ է: Ետ ամսածեցի կանխաւ որ ե-
թէ կարելի է այս հարցումը զանց առնեմ եւ
անոր հետեւանաց տեղի չտամ, բայց հնար չե-
ղաւ: Բացատրեմ ըսածս: Վեհափառ Կաթու-
ղիկոսը ամբաստանութեան ներքեւ ձգած է թէ
Ընդհ. ժողովս եւ թէ անոր Նախագահող Սրբ-
բազան Պատրիարքը. այսպիսի ամբաստանեալ
վիճակի մէջ ինչպէս կրնամք շարունակել մեր
նստերը. գուցէ Վեհափառ Կաթուղիկոսը սը-
խալած ըլլայ, զի նա Հոգովայ Պապը չէ որ
չսխալի, եւ իրաւունք չունենայ զմեզ եւ մեր
Սրբազան Նախագահն ամբաստանութեան ներ-
քեւ ձգել, բայց քանի որ կամբաստանէ՝ ուս-
տի առ այժմ ամբաստանեալ եմք, եւ այսպիսի
վիճակի մէջ նորէն կը հարցնեմ, ինչէ՞ս կըր-
նամք մեր նստերը շարունակել. ահա այն ծանր
վտանգը, որոյ մէջ ինչպէս պահ մ'առաջ ըսի՝
Ընդհ. ժողովը կը գտնուի: Հիմայ տեսնեմք թէ
ինչէ՛ այդ ամբաստանութիւնը. — ահա Վեհա-
փառ Կաթուղիկոսին հեռագիրը, որ ուղղեալ
է առ Սրբազան Պատրիարքն:

Առ Պատրիարք Հայոց Կ. Պոլսոյ.

Ժողովն Կոստանդնուպոլսոյ ընդ Ձերովնա-
խագահութեամբ անդր քան զիւր Սահմանադ-
րութիւն եւ զիրաւաստութիւնն յուզէ եւ լուծէ
զեկեղեցական փափուկ խնդիրս, որպիսի է
Սոսոյ եւ Աղթամարայն, եւ որ ցաւալին է,
Սրբազանութիւն Ձեր՝ ընդ քողով մերս փոխա-
նորդութեան՝ ընդդէմ նուիրական աւանդու-
թեանց սրբոց Հարց եւ իրաւանց Մայր Աթո-
սոյս յօժարի գործել յանուն մեր՝ առանց մեր
գիտութեան. եւ զայնպիսի խնդիրս եւ զնոր
Սահմանադրութեան յանձնադրաստան հեղինա-
կել ձեռն արկանէ, որ մի միայն անկ է Ընդհ.

Ժողովոյ, ըստ եկեղեցական օրինի գումարելոյ
ընդ նախագահութեամբ Կաթուղիկոսի ամենայն
Հայոց:

Ահա՛ կը տեսնէք, երեսփոխան էֆէնտիններ,
որ Վեհափառ Կաթուղիկոսն օրինաւոր չգատեր
այն որոշումը, զոր Ընդհ. ժողովը տուած է:

Այս միջոցին Ատենադպիր էֆ. երկուգածու-
թեամբ « մեղայ Աստուծոյ » կըսէ:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. Էֆ. — (Ընդդէմէլ) Կամբաս-
տանեմ Գիւանը որ ծիծաղ կը յայտնէ Վեհափառ
Կաթուղիկոսի հեռագրին վրայ:

Ոմանք երեսփոխաններէն կը բողոքեն Օգոսէն
էֆ.ի դէմ, առարկելով թէ Ատենադպիր էֆ.ի
ծիծաղը Պէկեան էֆ.ի ուղղեալ էր, եւ ոչ թէ
Վեհափառ Կաթուղիկոսի հեռագրին, իսկ Օգ-
ոսէն էֆ. կը պնդէ զոչելով թէ ծիծաղն հե-
ռագրին վրայ էր:

Պէկեան Թ. Էֆ. (Հեռագրէն ընդդէմէլ շք-
անակէլ) Ուստի նուիրական կանոնք եկեղեց-
ւոյ եւ մեք ոչ կարեմք ճանաչել զայդպիսի
որոշում, եւ առ ՚ի զառաջս առնուլ ազդովը-
նաս հետեւանաց յապագային, ազդ առնումք Ձեզ
զգուշանալ ՚ի չեղելոյ ՚ի շաւղաց Հարց սրբոց:

Մայր-քոյն Պարէրէր և Կաթուղիկո-
սի շնորհակալութեամբ
Գ. ՈՐԳ

Այս պահուս Ատենադպիր Փափազեան էֆ.
խօսք կը խնդրէ Գիւանէն եւ Օգոսէն էֆ. « Թո՛ղ
ատենադպրութիւնը շարունակէ » կըսէ. Փա-
փազեան էֆ. « այնպիսի օր մը զիս ատենադպիր
ընտրեցիք որ ես կուզեմ խօսիլ » ըսելով, ժո-
ղովականաց կարգը կիջնէ. եւ Նախագահ
Սրբազան հօր հրաւիրանօք իւթիւճեան Կա-
րապետ էֆ. կիջնէ ի Գիւան, առժամանակեայ
ատենադպրութեան պաշտօն վարելու համար:

Պէկեան Թ. Էֆ. (Շքանակէլ) Ինչպէս որ
ըսի, կարելի եւ շատ հաւանական իսկ է որ
Վեհափառ Կաթուղիկոսը սխալած ըլլայ այդ ամ-
բաստանութեան մէջ, ասի լուրջ քննութեան
կարօտ է, բայց ո՛վ եւ որ ժողով պիտի կրնայ
քննել եւ որոշել այս կէտք. ՚ի ձեռքին ունեցած
Սահմանադրութիւնն իս բացորոշ կը դժէ մեր
ձեռնաստութիւնը կրօնական խնդրոց նկատմամբ
եւ յայտնի կը ցուցնէ թէ մինչեւ ուր կը յանգի
մեր այս Ընդհ. ժողովոյ հեղինակութիւնը. կան

այնպիսի կրօնական խնդիրներ՝ որոց լուծումը
մեր հեղինակութիւնէն վեր ճանչելով՝ Վեհափառ
Կաթուղիկոսին կը զիմեմք, ըսել է որ կը ճան-
չեմք իր վրայ այդ հեղինակութիւնը, սակայն
հիմայ քանի որ մեր Վեհափառ Կաթուղիկոսը,
մեր կրօնապետը, զմեզ կրօնական խնդրոց մը
նկատմամբ կամբաստանէ, որո՞ւ պէտք է զի-
մեմք այս պարագայիս մէջ. եւ միթէ՞ անտար-
բեր գտնուելով այդ ամբաստանութեան պար-
տիւք մեր նիստերը շարունակել. այս վերջի
ընթացքը բռնել անկարելի է առանց ըմբոստու-
թեան գրօշ պարզելու, զոր եւ ոչ ոք կրն-
դունի: Ուստի լուրջ խորհրդածութիւններէ ե-
տեւ ուրիշ միջոց չեմ գտներ այլ եթէ Համա-
դումար Ընդհանուր ժողովոյ մը զիմել որ մի-
այն կարող է եւ հեղինակութիւն կրնայ ունե-
նալ քննել զայդ ամբաստանութիւնը եւ զճիւ-
արձակել, Մի՛ կարծէք թէ կըքով կը խօսիմ,
երեսփոխան էֆէնտիններ, լաւ մտածեցէ՛ք մեր
այսօրուան դրից վրայ, այն ատեն զիւրաւ պի-
տի իմանաք որ ամենայն անկեղծութեամբ եւ
հանգարտութեամբ կը խօսիմ:

(Գլխի մը մտածեցէ՛ք)

Տեսէ՛ք, այսօրուան մերառաջին գործը՝ օր-
ուան կարգին հետեւելով՝ կրօնական ժողովոյ
մը ընտրութիւնը պիտի ըլլայ, ժողով մը՝ որ
ընդհանուր Տաճկաստանի ազգայնոց կրօնքին
վրայ պիտի հսկէ. կը հարցնեմ ուրեմն Ընդհ.
ժողովս պիտի կրնայ այսօր իւր ամբաստանեալ
վիճակին մէջ կրօն. ժողով ընտրել:

Մի քանի ձայներ. — Այո՛. Պէրէ ինչո՛ւ ընդդէմ
էլ մե՛ք միտածեցէ՛ք:

Պէկեան Թ. Էֆ. — (Շքանակէլ) Կրօնէ թէ՛
պիտի կրնայ ընտրել, սակայն ես չեմ կրնար այդ-
պէս ըսել. Ս. Պապը ամբաստանութեան եւ քա-
նադրանաց ներքեւ ձգեց զիտալիա եւ անոր կա-
ռավարութիւնը, իսկ Իտալիա քաղաքական
իշխանութեան ներքեւ, հետեւապէս անկախ լի-
նելով կրօնական ազդեցութենէ, առ ոչինչ հա-
մարեց Պապին բանադրանքը եւ միեւնոյն բա-
նադրանաց ներքեւ վայրկեան մը չվարանեցաւ
իւր կառավարութիւնը շարունակելու: Սակայն
մեզի համար այդպէս չէ. մեր Ազգը կրօնական
ազգ է, մեր գործերը կրօնական են, ուստի
մեր կրօնապետին այսինքն Վեհ. Կաթուղիկոսի
ամբաստանութեան ներքեւ չեմք կրնար այսօր
կրօնական ժողով կազմել. զի երբ վաղը մեր
կազմած կրօնական ժողովը եկեղեցական մը
պատմել ուզէ, այդ եկեղեցականն իրաւունք

պիտի ունենայ ըսել թէ՛ զքեզ չեմ ճանչեր,
ըստ որում ամբաստանեալ Ընդհանուր ժողովոյ
մը կողմէ ես ընտրեալ. պիտի տեսնեմք որ վա-
ղը շատ մը ընդդիմախօս լրագիրներ ըստ քմաց
պիտի լեցնեն իրենց թերթերը, մեր այս ընթաց-
քին դէմ: Ուստի մինչդեռ այսօր այս անտե-
ղութիւններն երեւան չեն եկած, ձեռք տամք
մէկ մէկու եւ իբր եղբայր միատեղ խորհիմք
այս անտեղութեան առաջին առնելու համար:

Արդ խօսքս եզրակացնելով կրամ թէ՛ քանի
որ ամբաստանեալ է այս Ընդհ. ժողովն, ան-
հնար է իրեն . . .

Մէկ քանի նստարաններու վրայէն. — Ինչ ըսել
կոչեմ, չեմ հասկնալ. մե՛ք զմեզ միտածեցէ՛ք
ներքեւ չեմ ճանչեր. այդ յեր երեսփոխան մե՛ք
որոշեմ զմեզ յեր յեր յեր յեր յեր յեր:

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ. — Ինչպէս կը տեսնէք
հեռագիրը կըսէ թէ Պոլսոյ Ընդհանուր ժողովը
փափուկ խնդիրներ կը յուզէ. ըսել կուզէ թէ՛
դու, որ Եպիսկոպոս եւ Պատրիարք պիտի ըլ-
լաս, ինչպէս թոյլ կուտաս որ Հայաստանեայց
Եկեղեցւոյ օրինաց դէմ վճիռներ տրուին այդ
ժողովոյն մէջ: Այս խնդիրն իբր եկեղեցւոյ
խնդիր ինձ կուղղէ, իւր մասնաւոր հեռագրով.
մասնաւորապէս ես իրեն պատասխանեցի եւ
դեռ պատասխանս պիտի շարունակեմ, հա-
մոզելու համար Նորին Վեհափառութիւնը
թէ՛ ես երբէք Հայաստանեայց Եկեղեց-
ւոյ օրինաց եւ Աւետարանի ոգւոյն դէմ
չեմ մեղանշած: Ուստի թողէ՛ք ինձ որ ես իմ
պարտքս կատարեմ. այս խնդիրն ինձ կը վերա-
բերի, ես ատոր պատասխանը ձեզի հետ չեմ
կրնար տալ:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. Էֆ. — Վեհափառ Կաթու-
ղիկոսը հեռագիր մ'ուղղած է առ Ս. Պատրի-
արքն, որով կամբաստանէ թէ՛ զՆա եւ թէ՛ Նո-
րա նախագահութեան ներքեւ եղող Ընդհ. ժո-
ղովս. ժամանակը երեւան պիտի հանէ թէ՛ Կա-
թուղիկոսն իրաւունք ունի՞, եթէ ոչ, սակայն
երեսփոխանաց ոմանց սրտերն այնչափ մը պա-
ղած են մեր Վեհափառ Կաթուղիկոսն որ, մին-
չեւ իսկ իրենց ներկայ վարժունքն ակն յանդի-
ման զգացնել կուտայ այդ պաղութիւնը. վասն
զի կը տեսնեմք որ յայտնապէս կը ծիծաղին Կա-
թուղիկոսի հեռագրին վրայ . . .

Մի քանի ձայներ, մասնաւորապէս Աղարէզ-
143

եան Մ. Էֆ. — Մէն+ Եր ընդ-ցին և Ենէ զբոյ իւ թիժ-դիժ+ :

Փոխադարձ ձայներ կը բարձրանան , չչուկն ընդհանրապէս կը ծաւալի ժողովոյն մէջ եւ խօսքերն անհասկանալի կը լլան :

Ատենապետ էֆ. աղմուկն հանդարտեցնելու համար ատենը կը զոցէ եւ երեսփոխանք պահ մը դադար առնելէ յետոյ վերստին կը գումարին ի ժողովարան :

Վիճարանութեան ենթարկեալ խնդրոյն շարունակութիւն տալէ յառաջ՝ Ատենապետ էֆ. կը ծանուցանէ թէ՛ մեծադոյն ժառանգացած է , եւ թէ պէտք է՛ նախ քան զամենայն նորոնտիր երեսփոխանաց ընտրութիւնքը վաւերացնել , զոր Գործադիր Յանձնաժողովը իւր երկու տեղակազրերովն հաղորդած է Գիւանին :

Ատենապետ էֆ. կը կարգայ Գործադիր Յանձնաժողովոյ հետեւեալ տեղակազրերն :

Ամենապատիւ Սրբազան Հայր , եւայլն .

Թօփ-Գափուլի ընտրողական ժողովոյ Նախագահի կողմէն ստորագրեալ յայտագրով կը տեղեկանամք թէ՛ նոյ . 14 կիւրակէ օրը , նոյն թաղի 120 քուէարկուաց 36 ին մասնակցութեամբն , երեսփոխանական ընտրութիւնն ըստ օրինի կատարուեր , եւ Խաչատուր էֆ. Ասկանեան 33 քուէով երեսփոխան ընտրուեր է :

Աոյն ընտրութեան օրինաւորութիւնը հաստատելով Յանձնաժողովս , կը փութայ պատկառելի ժողովոյդ ներկայացնել ՚ի վաւերացումն :

Նոյնպէս ՚ի վաւերացումն կը փութայ ներկայացնել Փափաղեան կարապետ էֆ. ի երեսփոխանութեան Ենի-Գարուլի թաղէն ընտրութիւնը , որ ասկէ առաջ կատարուած էր եւ որուն օրինաւորութիւնը Յանձնաժողովս ստուգած է եւ բողոքող չուներ :

3 Գեկ. 1871 Ղալաթիա :

Ատենապետ Ատենապետ
Ս. Փ. Գ. Ե. Ս. Խ. Զ. Գ. Ե. Ս.

Ամենապատիւ Սրբազան Հայր , եւայլն .

Մովսէսեան Պօղոս էֆ. Տիւրքի կը գաւառէն երեսփոխան ընտրուա) եւ այս ընտրութիւնը ըստ օրինի հանրագրութեամբ ծանուցուած ըլլալով , կը փութամք ներկայացնել պատկա-

ռելի ժողովոյդ ՚ի վաւերացումն :

Մնամք եւայլն .

21 Յունի. 1872 ՚ի Ղալաթիա

Ատենապետ Վասն Ատենապետի
Ս. Փ. Գ. Ե. Ս. Խ. Զ. Գ. Ե. Ս.

Ատենապետ էֆ. քուէի կը դնէ Ասկանեան Խաչատուր , Փափաղեան կարապետ եւ Մովսէսեան Պօղոս էֆ. ներս ընտրութիւնքը եւ ժողովն ընդհանուր հաւանութեամբ կը վաւերացնէ զանոնք :

Ատենապետ էֆ. կը ծանուցանէ թէ՛ բացակայ երեսփոխաններէն Այվատեան Մատթէոս էֆ. գրաւորապէս զիտողութիւններ հաղորդած է Գիւանին , սակայն բացակայ երեսփոխանաց գրաւոր զիտողութեանց խնդիրն ատենական կանոնագրութեան հաստատուելու ժամանակին վերապահեալ ըլլալն առարկելով զանց կառնու Այվատեան էֆ. ի գրութեան ընթերցումը :

Ատենապետ էֆ. կը յաւելու նաեւ թէ՛ Տ. Խորէն Եպս. նամակ մ'ուղղած է Գիւանին , որով Էջմիածնայ Վ. Ե. կաթողիկոսին կողմէ առ ինքն ուղղեալ մի գրութեան պատճէնն հաղորդելով կերպով մը յետս կոչում կընէ իւր մասնակցութիւնն , ՚ի վաւերացումն Սոյ կաթողիկոսական ընտրութեան . եւ Ատենապետ էֆ. Նախագահ Սրբազանի եւ ժողովոյ հրահրանք կը կարգայ զայն , որ ահաւասիկ :

4. Պոլիս 21 Յունիար 1872

Մեծապատիւ Տեառք .

Ընդհ. ժողովոյ Լ. Գ. նստին մէջ Սոյ կաթողիկոսական վաւերացման խնդրոյն վրայ յայտնած կարծիքս ժողովոյս մեծամասնութեան համաձայն կարծիք մըն էր . Փութացայ հաղորդել զայն առ Վեհափառ կաթողիկոսն ամենայն Հայոց , խնդրելով որ իւր Հայրապետական վաւերացմամբ պսակէ երեսփոխանական ժողովոյն որոշումը :

Վեհափառ Հայրապետը՝ ոչ միայն զայն չընտրէր , այլ եւ բացէ ՚ի բաց կը հերքէ ՚ի հայրապետական կոնդակին , զոր պատիւ կընէ ինձ ուղղել ՚ի 15 դեկտեմբերի 1871 ամի , վճռելով որ « յայտ իսկ է ամենից զի առանց ձեռնարկոյն զիտութեան լմերոյ եւ հաւանութեան եւ բարեկարգելոյ զգրութիւն վիճակա-

« ւորացն Սոյ եւ Աղթամարայ՝ անմարթ էր քան « զիրաւունս եւ զտրամադրութիւն Սահմանագրութեան Պօլսոյ միջամտել եւ վճիռս արձակել « Ս. Պատրիարքի եւ երեսփոխանութեան Կ. Պօլսոյ յընտրութիւն կամ վաւերացումն Եպիսկոպոսի Էջմիածնի ՚ի Վեհափառ ընտրութեան « Սոյ » :

Արդ քանի որ ամենայն Հայոց Վեհափառ կաթողիկոսը՝ Ընդհ. ժողովոյ վերոյիշեալ ձեռնեքիցութեանը մէջ կը տեսնէ « ապագայ վտանգ մեծ Ս. Եկեղեցւոյս եւ Ազգի » , քանի որ բացարձակ կերպով կը գրէ ինձ եւ ամենայն եպիսկոպոսաց , Վարդապետաց , Քահանայից եւ ամենայն ժողովրդոց հարազատից Մայր Աթոռոյ , եւ իրրեւ ոչ ոքի ոչ ոքի և ոչ ոքի Ս. Աթոռոյ , (ինչպէս Վեհափառ կաթողիկոսը կը բարեհաճի զիսանուանել) , պարտ անձին կը համարիմ զվերոյիշեալ Հայրապետական կոնդակն հաղորդել պաշտօնապէս առ պատկառելի երեսփոխանական ժողով , որպէս զի լուրջ խորհրդածութեանց նիւթ ընէ զայն , եւ ես պարտուցս կատարմամբը ազատ մնամ յամենայն պատասխանատուութիւնէ :

Խորէն Եպիսկոպոս Նոր Պէյ

ՊԱՏՃԷՆ

Գէորդ ծառայ-Քրիստոսի եւ անհատանելի կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ եւ կաթողիկոս ամենայն Հայոց , Մայրազոյն Պատրիարք համազգական նախաւեճար Աթոռոյ Արարատեան առաքելական Մայր Եկեղեցւոյ սրբոյ կաթողիկէ Էջմիածնի , Գեր Խորէն Սրբազան Եպիսկոպոսի , սիրելի որդւոյ եւ հարազատի Ս. Աթոռոյս եւ մեր խնդալ ՚ի Տէր :

Բանք նամակի ձերոյ գրելոյ ՚ի 15 նոյեմբերի տարւոյս ոչ սակաւ զարմացուցին զմեզ , թէ զիմարդ իցին վրիպեալ ՚ի սրատես աչաց եւ ՚ի խոհական մտացդ դաւ խարդախութեան եւ զաղանաձեռն զարան , որ ՚ի բազմաց հետէ լարեալ յոմանց ՚ի մերազնէից եւ յօտարաց ՚ի վնաս եւ ՚ի փեռեկտումն միութեան սիրելի որդւոյ Մօր մերոյ Հայաստանի , ՚ի նախատինս Առաքելական Եկեղեցւոյս Հայաստանեայց եւ ՚ի բոնարարումն իրաւանց իշխանութեան Մայր Աթոռոյս Արարատեան . զոր ամօք առաջ տեսիք զխարդաւանս եւ զզուշացայք , զվնասակարն այժմ քան զառաջին համարիք օգտաւէտ եւ զպարտութիւնն վերագրէք ՚ի պարծանս եւ ՚ի յաղթութիւն :

Ձեռք յերկրայս զի եթէ տեսնէիք զապագայ վտանգն մեծ Ս. Եկեղեցւոյս եւ Ազգի , ոչ յօժարէիք թարգման հանդիսանալ ՚ի կողմանէ մերմէ յերեսփոխանական ժողովի անդ եւ յայտնել զուրախութիւն :

Քանզի յայտ իսկ է ամենից , զի տոանց կանխագոյն զիտութեան մերոյ եւ հաւանութեան եւ բարեկարգելոյ զգրութիւն վիճակաւորացն Սոյ եւ Աղթամարայն , անմարթ էր անգր քան զիրաւունս եւ զտրամադրութիւն Սահմանագրութեան Պօլսոյ , միջամտել եւ վճիռս արձակել Ս. Պատրիարքի եւ երեսփոխանութեան կոստանդնուպոլսոյ յընտրութիւն կամ վաւերացումն Եպիսկոպոսի Էջմիածնի ՚ի հակաթոն յաջորդութիւն Սոյ , եւ չէ երբէք ներելի միաբանի Մայր Աթոռոյս ընդունիլ զայն առանց մեղանշնելոյ ընդդէմ իւր երդմանն : — Արդ այսու կոնդակաւ մերով արժան համարեցաք , յիշեցուցանել հայրական սիրով Ձեզ եւ ամենայն Եպիսկոպոսաց , Վարդապետաց եւ Քահանայից եւ ժողովրդոց հարազատից Մայր Աթոռոյս ըզսրբազան պարտիս Ձեր , զոչոչ լինել ՚ի խընդիրս Սոյ եւ Աղթամարայ , որ արդէն բազմօք իմն կիճուեալ եւ ծանրացեալ են ՚ի յուզելոյ ոմանց անխորձ արանց , եւ ՚ի վերջոյ կարօտի անշուշտ օրինաւոր վճոյ ընդ մերով նախագահութեամբ կազմեալ Ընդհ. ժողովոյ , զուժարելոյ յամենայն Եպիսկոպոսաց եւ յԱռաջնորդաց հայրնակ վիճակաց եւ ՚ի Վանահարց եւայլն , եւ յաշխարհական երեսփոխանաց եւ ահա այսպիսի Եկեղեցական ժողով միայն է ձեռնհաս լուծել զինդիրն զայն եւ հաստատել ըստ օրինի եւ ըստ եկեղեցական կանոնաց ըզյարարեցութիւն եւ զնոր կարգադրութիւն կառախարութեան Սոյ եւ Աղթամարայ , զընդփրկելալս եւ զոխտազանցս եւ զերգմնազանցս զաստապարեալ :

Ողջ լերուք զօրացեալ Տէրամբ .
ԳԼՈՐԳ Գ.
ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ . — Տ. Խորէն Եպս. ի առանձինն երեսփոխանական ժողովոյ ուղղած այս նամակին վրայ մի քանի զիտողութիւն ունիմ , զորս կուզեմ յայտնել :

ժողովոյս Լ. Գ. նստի մէջ Սոյ կաթողիկոսական ընտրութեան վաւերացման աթիւն Տ. Խորէն Եպս. մեզ հետ ձայնակցելով ճառօրէն խօսեցաւ եւ այն ընտրութիւնը նախաինամական անօրէնութիւն մը համարելով զբուտեց :

կը հարցնեմ թէ՛ ո՞վ բանադատեց զինքն այն օր խօսք առնուլ այդ խնդրոյն վրայ եւ մեզ ձայնակցել, ո՞վ ստիպեց զինքը մասնակցիլ մեր բախտութեան եւ այնպիսի եռանդեամբ ճասել, որ մինչեւ խիճախանարուէր, եւ յետոյ ի՞նչ պատճառ եւ զրգիւ կար խորէն Եպս. Ի. Ընդհ. Ժողովոյ ձայնն իրեն սեպհականելով ինչեւ առանձինն Ա.Ե.Ն. կաթողիկոսին հաղորդել այդ վաւերացումը, չեմ գիտեր ի՞նչ եղանակաւ, որ Ա.Ե.Ն. կաթողիկոսն իւր ի պատասխան զբաւթեամբը պոզցես սրով կը կտրէ այդ ձայնն, որ մեր հետ ելաւ :

Մինչդեռ մեք Աւարդապետքս եւ Եպիսկոպոսքս Ս. Աւետարանի քարոզիչք, նորա ոգին խաղաղասիրութիւն՝ պարտիմք ուսուցանել ժողովրդեան, ա՛նա՛ դարձեալ դաւի եւ խարճաւանաց բառեր դուրս գալու տեղի կուտամք այս առթիւ, որք շատոնց ՚ի վեր մոռցուած էին, իսկ Ա.Ե.Ն. կաթողիկոսի զբաւթեան գալով, զարմանալի կէտ մը կայ անոր մէջ, որ իմ պաշտօնական իրաւասութեանս հետ առնչութիւն ունի : Ա.Ե.Ն. կաթողիկոսն այդ զբաւթեան մէջ կըսէ Խորէն Եպս. Ի. թէ՛ « արժան հաւատարեցաք յիշեցուցանել հայրական սիրով ձեզ « եւ ամենայն եպիսկոպոսաց, վարդապետաց, « քահանայից եւ ժողովրդոց հարազատից Մայր « Աթոռոյս զարշազան պարտիս ձեր. » այս խօսքերուն առ Խորէն Եպս. ուղղուիլն՝ այնպիսի գիրքի մը մէջ նկատել կուտայ զանի, որ հարկադրիլ կ'ըզամ պահ մ'այս աթոռէս ի՛նչեւ ուղիւ զինքն իմ տեղս հրամցընելու :

Ա.Ե.Ն. կաթողիկոսն առ իս ուղղած հետադրով խիստ կարճ կը խօսի, մինչդեռ Խորէն Եպս. Ի. իր լիազօր կամբ կը յայտնէ եւ անոր միջոցաւ Մայր Աթոռոյ հարազատ առ ամենայն Եպիսկոպոսս, Աւարդապետս, Քահանայս եւ Ժողովուրդս, առանց յիշելու թէ՛ Խորէն Եպս. մաւնաւոր զիւղի մը մէջ քարոզչութեան մասնաւոր պաշտօն մ'ունի միայն :

Խորէն Եպս. կարող էր նկատողութեան առնուլ այս կէտն, եւ Ընդհ. Ժողովոյ ձայնը պաշտօնապէս առ Ա.Ե.Ն. կաթողիկոսն հաղորդելու չեղնել Այս ընթացքը միտում կը յայտնէ յեղափոխութիւն յարուցանելու եւ անոր պարագըլուիս հանդիսանալու :

Ի՞նչ կը նշանակէ Ա.Ե.Ն. կաթողիկոսին այդ զբաւթիւնն. ըսել ուղիւ թէ՛ ես իմ պաշտօնըս չեմ ձանձեր, եւ կը զլանամ Եկեղեցւոյ ի-

րաւունքը պաշտօնական :

Չեմ ուզեր այդ զբաւթեան պարունակութեանը նկատմամբ մանրամասնութեանց մտնել եւ զանի կէտ առ կէտ քննադատութեան առնուլ, միայն թէ՛ պարագան յարմարագոյն է առկա մնացած կարեւոր խնդիր մը յուզել եւ լուծելու, որոյ կարողագրութիւնն իմ եւ միանշանայն Ընդհ. Ժողովոյ ջերմ բաղձանքն է : Աւստի չը պիտի թողում այս առթիւ փախչել :

Բնական է որ կաթողիկոսութիւն եւ Պատրիարքութիւն, ինչ զէս նաեւ անոն հանրական պաշտօն, իրենց իրաւասութեան սահմանն ու յարաբերութեանց օրէնքն ունենան : Եթէ Աղղը զիս Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ հարազատ դաւակ ձանչելով Պատրիարք ընտրած է, եւ այնպէս կը ձանչէ ու կընդունի, պէտք է գիտնայ նաեւ թէ՛ ի՞նչ են Եջմիածնայ կաթողիկոսի եւ Կ. Պօլսոյ Պատրիարքի իրաւունքն ու պարտիքը : Ահա այս կէտն է, զոր կը փափաքիմ յուզել, ինչպէս որ Ընդհ. Ժողովն ալ բաղձաց փափաք յայտնած է այս կարեւոր խնդրոյն լուծման :

Սակայն այս խնդիրն օրուան կարգն անցնելէ առաջ, կը փափաքիմ որ Կրօն. Ժողովն ընտրուի, որոյ կազմութիւնը կրօնական խնդրոց նա մանաւանդ այս նոր խնդրոյն նկատմամբ խիստ ստիպողական է : Աւստի կատաշարկեմ որ անյապաղ Կրօն. Ժողովոյ ընտրութեան ձեւնարկեմք, եւ անոր կազմութեանն վերջն անմիջապէս յարաբերութեանց խնդիրը վիճաբանութեան ենթարկեմք :

Ատենապետ էֆ. կը արահազրի Նախագահ Սրբազանի առաջարկութիւնը քուէի դնել. երեսփոխաններէն Օդսէն, Պէկեան, Արշակ, Ժամակոչեան եւ Մաթիկոնեան էֆ. ներք կը բողոքեն Ատենապետ էֆ. ի արամադրութեան դէմ, մինչդեռ բողոք մ'այնքն Նախագահ Սրբազանի առաջարկութեան քուէարկելը կը պահանջեն :

Ատենապետ էֆ. ձայնից առաւելութեան հետեւելով, վերոյիշեալ երեսփոխանաց բողոքին ներքեւ, Նախագահ Սրբազան Հօր առաջարկութիւնը քուէի կը դնէ, եւ Ժողովը մեծագոյն մասամբ կընդունի դայն :

Հետեւապէս Ատենապետ էֆ. կը հրաւիրէ զԺողովականս Կրօն. Ժողովոյ ընտրութեան վրայ խօսք առնուլ :

Պէկեան մի քանի երեսփոխանաց հետ բարձրաձայն կը բողոքէ Գիւանին այս ընթացքին դէմ, զանի խարդախութիւն անուանելով :

Բազմաթիւ ձայներ կը մերժեն Գիւանի դէմ եղած բողոքն :

Ատենապետ էֆ. կաղղարարէ բողոքարկուաց թէ ապօրինաւոր է իրենց վարմունքը :

Ժողովը կը յուզի եւ այնքան երկարատեւ կը լինի յուզմունքը, որ Գիւանը մինչեւ իսկ ատենանը գոցել կը տրամադրի :

Այս պահուս Օտեան Գ. էֆ. խօսք ուղեւով Ատենապետ էֆ. երեսփոխանաց ստիպմամբ ատենանը կը շարունակէ եւ խաղաղութիւնը վերահաստատելով խօսք կուտայ Օտեան էֆ. ի

ՕՏԵԱՆ Գ. էֆ. — Քիչ մը հանդարտութիւն եւ լուծութիւն կը խնդրեմ Ժողովէդ. քիչ մը հանդարտութիւն, որ կարենամ լսելի ըլլալ. այլ ես իսկ այնքան յուզեալ եմ, որ չգիտեմ թէ պիտի կրնամ հասնիլ նպատակիս եւ ամբողջապէս բացատրել իմ զգացումս : Այսպիսի պարագայի մը մէջ ինձ մի միայն քաջալեր Ձեր ներողամտութիւնը կրնայ ըլլալ եւ ես այս ներողամտութեան հետ կը խնդրեմ նաեւ որ այնու անկեղծութեամբ մտիկ ընէք իմ խօսքերս, որով կը բղխին իմ սրտէս. զի վերջին պարտք մը կը կատարեմ ահա Ազգին համար եւ այս Ժողովին համար, որոյ էութիւնը Ազգին էական շահերէն մէկն է : Մե՛ղքը ձեր վրայ, եթէ նորէն կասկածի յոսակ դնէք խօսքերս, ինչպէս սովորութիւն ունին ոմանք :

Ես այսօր հոս ներկայ գտնուելուս շատ զրգւջացի մէկ կողմէն, պիտի չզայի, այլ միայն անոր համար եկայ, վասն զի այս երրորդ պիտի ըլլար բացակայութիւնս եւ հետեւաբար հրամարեալ պիտի համարուէի. չուզեցի Ազգին երեսփոխանն ըլլալու պատուէն զրկուիլ :

Միւս կողմէն չպիտի զղջամ գալուս ու պիտի գոհանամ ալ, զի կը տեսնեմ որ այնպիսի ճամբու մը մէջ գնել կուզեն Ժողովը, որուն ծայրը ելք չեմ տեսներ. այնպիսի պայմաններով եւ այն կերպով խնդիրն երեւան կուգայ, որ ինքնին անլուծանելի ըլլալու բոլոր հանգամանքներն ունի, ու մէկ կողմէն ալ ամեն ջանք կըլլայ կրքերը զարթուցանելու, զրգուելու, այնպէս որ՝ ոչ ոք կրնայ հեռատեսել հետեւանքը : Եթէ կրցայ շարեաց առջեւն առնել, այն ատեն ահա չպիտի զղջամ գալուս եւ պիտի գոհանամ :

Անոնք որ յարուցին հոս այս խնդիրը, վստանգ աղաղակեցին. այս անգամ, ես ըսեմ ձեզի, այդ վստանգը երեւակայական վստանգ մը չէ եւ ոչ խարուսիկ հնարք մը, այլ իրական է վստանգը եւ մօտալուս. վստանգ կայ Ազգին խաղաղութեանը համար, վստանգ կայ սոյն Ընդհ. Ժողովին համար, ահա անոր համար է որ կը միջամտեմ այնպիսի խնդրոյ մը մէջ, ուր բնաւ յօժարութիւն չպիտի իմանայի խօսելու :

Երեսփոխան էֆէնիսինե՛ր, գիտէ՛ք ի՞նչ բան է այս խնդիրը, որ կսպառնայ մեզի.— Ազգին մէջ իրաց վիճակին մէկ հետեւանքն է : Ազգին մէջ մէկ քանի շփոթութիւններ կան, որ քաղաքական պարագաներու արդիւնքն են : Այդ շփոթութիւնները ցաւալի են. բայց նոյն իսկ այն քաղաքական պարագաներու համար որոնց ակնարկեցի, փափաքելի է, պէ՛տք է որ առ այժմ պահուին : Ահա՛ կնճիղը : Եւ ահա ասոր համար ոչ Սրբազան կաթողիկոսը եպեղելի է, որ կը դատապարտէ Աւարդութեան ըրածը եւ Ընդհ. Ժողովոյ հաստատածը, ոչ Պատրիարքը եպեղելի է, ոչ Քաղ. Ժողովը, ոչ Ընդհ. Ժողովը, ոչ մենք ամենքս, որ մասնակից եղանք այս որոշման. (սխալ ըսի թէ Բէնէ, վասն զի ես ոչ մէկ կողմ եւ ոչ միւս կողմ մասնակցութիւն չունեցայ, այլ ատենապետ էի այն ատեն եւ միայն ատենապետութիւնս վարեցի.) եւ ոչ Խորէն Սրբազանը, որ ինքնաբերաբար եւ այնքան եռանդեամբ ծափահարեց Ընդհ. Ժողովոյ որոշմանը : Եւ ինչո՞ւ. վասն զի Ընդհ. Ժողովն Եջմիածնայ Եպիսկոպոսի մը Սոյ կաթողիկոսութեան ընտրութիւնը վաւերացնելով, եւ այն կաթողիկոսէն խոստմնագիր առնելով Եջմիածնայ Սրբազան կաթողիկոսին հետ հաստատուելիք յարաբերութեանց օրէնքն ընդունելու, խոստմնագիր, որ սկզբան ընդունելութիւնը կը նշանակէ նորընտիր կաթողիկոսին կողմէն, մեծ քայլ մը կը կատարէր դէպ ՚ի միութիւն :

Ընդհ. Ժողովոյ ըրածն աղէկ էր, այնու զի միութեան կը մօտենար. բայց Ս. կաթողիկոսը իրաւունք ունէր զայն գէշ գտնելու, զի անի՛ միայն մօտենալը չէր կրնար ընդունիլ, այլ բացարձակապէս միութիւնը : Այս է իր պաշտօնին պահանջմունքը :

Սրբազան կաթողիկոսին համար, ինչպէս ինձի համար ալ, եւ զոր արդէն ըսած եմ ուրիշ անգամ սոյն Ժողովին մէջ, Սոյ Աթոռն

Եջմիածնայ հակառակ-աթոռն է, որ բնին կա-
թուղիկոսը չկրնար հաւանել որ իր մէկ Եպիս-
կոպոսն այդ Աթոռին վրայ բազմի. եւ ալ իր
տեղն ըլլայի չէի կրնար հաւանել: Քայց դուք
ալ ուրիշ կերպ չէիք կրնար ընել: Սոյ կա-
թուղիկոսութիւնը մենք չստեղծեցինք. եւ
որովհետեւ չէինք կրնար բնաջինջ ընել, պէտք
չէր որ բնաջինջ ընէինք. ըրինք, այսինքն ը-
րիք ինչ որ կրցաք՝ զայն Եջմիածնայ մօտեցը-
նելու համար:

Եւ հիմայ իրրեւ նշան մը այն վտանգին, ո-
րու վրայ կը խօսէի խօսքիս սկիզբը, ահա՛
Սրբազան Պատրիարքը կըսէ թէ՛ որովհետեւ
Սրբազան կաթուղիկոսն յուզեց այս խնդիրն եւ
Ընդ՛ ժողովոյ ատենը հանեցին, խնդիրը պի-
տի չթողու սինչեւ որ լուծուի. եւ ե՞րբ պի-
տի լուծուի եւ ի՞նչպէս պիտի լուծուի, ես
չեմ կրնար հասկնալ. եւ ի՞նչ պիտի ընեմք
ուրեմն: Եւ միւս կողմէն մէկ քանի երեսփո-
խ աններ կըսեն թէ՛ Սրբազան կաթուղիկոսն ամ-
բաստանած ըլլալով Պատրիարքը, քաղ ժողո-
վըն, ու Ընդ՛. ժողովը, Պատրիարք, քաղ ժո-
ղով եւ Ընդ՛. ժողով զաղարեալ են մինչեւ որ
զատուին:

Ոչ այս ոչ այն, երեսփոխան էֆէնտիններ, ա-
ռանց կրքի, առանց չափազանցութեան, խա-
ղաղասիրութեան հողուով նկատենք եղածը.
Ս. կաթուղիկոսին կողմէն պաշտօնական բան
մը եթէ կայ՝ առ Սրբազան Պատրիարքն ուղ-
ղած հետագիրն է. ուրիշ գրութիւնքը պաշտօ-
նական կերպարանք չունին մեզի համար. արդ
այդ հեռագիրը կը յանդիմանէ բայց չամբաս-
տաներ, եղած ստորութիւնը կը դատաւար-
տէ, բայց չբեկաներ. եւ հեռագիրն ինք ալ
կըսէ թէ ապագային զգուշութեան համար զԸր-
ուած է: Ազդարարութիւն մըն է, իրաւ սաս-
տիկ ազդարարութիւն մը, այլ ոչ ամբաստա-
նութիւն. ատենագրութեան մէջ անցնենք
զայն, արձանագրենք, այլ անկէ անդին չանց-
նինք. ապա թէ ոչ նորէն կըսեմ ես չեմ հաս-
կնար թէ ուր երթալ կուզէք. ես անպարտ եմ
ասկէ ետքը իմ մասիս:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Օտենն էֆ. շատ ի-
բաւայի խօսեցաւ, սակայն բայ ատենք եւ ոչ
ամաչեմք. խնդրոյն մէջ ուրիշ կէտ մը կայ.
Ամենուս սրտին մէջ հասկած կայ թէ Սոյ կա-
թուղիկոսն որ մը ընդհանուր Տաճկաստանի
կաթուղիկոս պիտի ընեն. այս կէտը ո՛չ Օտենն

էֆ. բացառեց, ոչ հախաղահ Սրբազան եւ
ոչ ուրիշ մէկը:

Վ.Կ. կաթուղիկոսին առ Ս. Պատրիարքն ուղ-
ղեալ հեռագիրը մենք պահուեցաւ. նաեւ կը
լսեմք թէ Ս. Պատրիարքէն հեռագրով պատաս-
խան արուած է առ Վ.Կ. կաթուղիկոսն Եջմի-
ածնի. ատոր ալ օրինակը չստանաք: Յարաբե-
րութեանց ծրագիր մը պատրաստելու համար
Յանձնաժողով մը կազմուեցաւ, այդ Յանձնա-
ժողովը դանդաղեցաւ դործ տեսնելու, մինչեւ
որ Մկրտիչ Եպիսկոպոս Սոյ կաթուղիկոս ընա-
րուեցաւ. այն ատեն՝ ստիպողականութիւն կայ
ըսելով Նորին կաթուղիկոսական ընտրութեան
վաւերացումն այս Ընդ՛. ժողովոյ մէջ աճա-
պարանօք ՚ի գլուխ հանեցին: Թէպէտ մեք
չեք ուրանար ստիպողականութիւնը, կը հա-
ւատամք նաեւ որ եթէ այդ ընտրութիւնը չը
վաւերանար, Սոյ մէջ մեծ խռովութիւն պիտի
ծագէր. այսու ամենայնիւ պարտաւոր էինք
խնդրոյն կրօնական ընտրութիւնը նկատողութեան
առնլով Համագումար ժողով մը կազմել, զոր
չըրինք: Այս գաղտագողի դարձուածքները բա-
ւական են կառավարող յարուցանել ՚ի մեզ, թէ
Սոյ Աթոռն ընդհանուր Տաճկաստանի կաթու-
ղիկոսական Աթոռ ընելու միտումներ կան:

ՕՏԵԱՆ Գ. ԷՖ. — Օգտէն էֆ. ի խօսքերուն
պէտք է պատասխանեմ. ո՛չ թէ ուշադրութե-
նէս վրիպեցաւ այն կէտը՝ որուն կ'ակնարկէ
Օգտէն էֆ. այլ ուղեցի եւ աշխատեցայ չը չօ-
չափել ինչ որ գրգռական կրնար ըլլալ. իմ
խօսքերուս նպատակը միմիայն խաղաղական
էր. չուղեցի որ խառնեմ ինչ որ կիրք կրնար
յարուցանել յիս եւ ուրիշներուն քով. վասն
զի առանց կրքի չեմ կրնար ըլլալ ես ալ. կա-
րելի՞ է որ, նոյն իսկ երբ ըստորովին խաղաղու-
թեան հողուով վաւրած եմ, չզղամ սրտմտու-
թիւն այն բաներուն համար դորոնք ես մոռ-
նալ ալ ուղեմ դարձեալ սրտքս կը ձգեն, երբ
կը տեսնեմ որ դեռ կառավարողներ կան, երբ կը
տեսնեմ որ հոս ոմանց հնարած գրպարտու-
թիւնները նոյն իսկ Ս. կաթուղիկոսին գրչին
տակ արձագանդ կը գտնեն: Ս. կաթուղիկոսը
իրաւունք չունի իր կոնդակին մէջ դաւ ու
խտրդաւանանք բառերը ուրիշներէն լսելով
յեղչելու այնպիսի մարդոց հասար դորոնք
չէ դատած ինք. . . .

Քայց հոս կանգ կ'առնեմ. եթէ հանդարտու-
թեան ու անկողմնակալութեան օրինակը չեն

տար անոնք, որոնց ամենէն աւելի կը պատկա-
նի, ես իսկ կուտամ իրենց անյիշաւարութեան
օրինակը եւ այս պարագային մէջ անձ-
նական խնդիր չեմ ուզեր խառնել արդէն
կնճառ խնդրոյ մը մէջ, թէ եւ եղած ակնար-
կութիւնքը ամենէն աւելի ինծի կը վերաբե-
րին: Կուք զիս կը գրգռէք, ես ամենայն հան-
դարտութեամբ ու անկեղծութեամբ ձեր ու-
ցած բացատրութիւնը կուտամ: Չէ՛, մեր մէջ
չկայ այնպիսի քաղաքականութիւն մը, ո՛չ ես
եւ ո՛չ բարեկամներս, իմ գիտնալովս, չեն ու-
նեցած այնպիսի քաղաքականութիւն մը Սիւրբ
բարձրացնելու եւ Եջմիածինը նուաստացնելու.
քաղաքականութիւն մը կայ ըստ մեզ այս խնդ-
րոյն մէջ, ազգային քաղաքականութիւն մը.
անցեալ տարի սոյն Ընդ՛. ժողովիս մէջ բա-
ցարկեցի զայն, այն իմ խօսքերուս մէջ ամ-
փոխուած է իմ բոլոր քաղաքականութիւնս.
մէկ խօսքով մը հասկցնեմ թէ ի՞նչ է, չը բարձ-
րացնել Սոյ Աթոռը այլ եւ չը վերցնել, հատա
պահել. պահել ժամանակ մը եւ օր մ'ալ վեր-
ցնել. պահել, այլ բարեկարգելով պահել.
վասն զի դեռ երէկ այդ Աթոռն աշխարհի առ-
ջեւ դայթակղութիւն մը, խայտառակութիւն
մ'եղած էր Ազգին համար. ես այդ դայթակ-
ղութիւնը, այդ խայտառակութիւնը չընդու-
նողներէն եմ, ո՞վ կըսէ թէ մենք Սոյ Աթոռը
ընդհանուր Հայոց կաթուղիկոսութեան աթոռ
ընել կուզենք: Կ'նշ որ ըսի, այն է միայն մեր
քաղաքականութիւնը, կուզենք նաեւ որ յու-
րարերութիւնք հաստատուին Եջմիածնայ Ա-
թոռոյն հետ, բայց գիտէ՞ք ե՞րբ կրնան դործ-
նական կերպով, Ազգին եւ ազգային միու-
թեան օգտակար կերպով, գժուիլ եւ հաստա-
տիլ այդ յարաբերութիւնք. — երբ որ մեր Ս.
կաթուղիկոսը, որ այնքան նախաձեռնողիք է
իր իրաւունքները պահանջելու մենք, գիտնայ
նաեւ ուրիշներէն ալ պահանջել զանոնք:

(Ընդհանուր էրդարեւ թղթագրութիւն)

Ահա՛ ասոնք են Օգտէն էֆ. ի պատասխան
ըսելիքներս. ես անկեղծութեամբ կարտասա-
նեմ զանոնք, դո՛ւք զիտէք, ի՞նչպէս կուզէք
այնպէս առէք:

Այս միջոցին Ատենագրովր Մէրեւեմ-Գուլի էֆ.
ժողովարանէն ներս կը մանէ եւ կանցնի իւր
աթոռը:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Թէպէտ ես կատկածի
վրայ խօսեցայ, բայց անձեւու վրայ չգրի այդ
կատկածը. ամենեւին չբուի եւ ըսել չեմ ուզեր
որ մեր կատկածներն Օտենն էֆ. ի վրայ են, նա
դործադրական փորձ մը տուած չէ պաշտօնա-
պէս, եթէ անձնականապէս միեւնոյն միտումն
ունի, չեմ գիտեր զայն: Թէպէտ Օտենն էֆ. ի-
ւր նպատակն ու քաղաքականութիւնը ճիշդ
յայտարարածին պէս կրնայ լինիլ, թէպէտ
Օտենն էֆ. այն ամեն իրաց մէջ, դորո՛ւ արջու-
թիւնը դործեց, ըստ ամենայնի անկեղծութիւն
կայ կըսէ եւ զմեզ ապահովցնել կուզէ, սա-
կայն դործելն հակառակը կը հաստատեն. թե-
րեւս վարչութիւնը սխալ գործած ըլլայ, բայց
դործերը գրած են: Սոյ կաթուղիկոսն իրօք
բարձրացաւ, որոչ խօսքերով երբէք եղած չէր
որ Սոյ կաթուղիկոս մը այսպէս վաւերացած
լինէր. Ընդ՛. ժողովն հաստատուելէ առաջ
երբ Ազգին մեծաւորներն եւ էտնաֆները կը
գումարէին ՚ի նիստ, Ընդ՛. ժողովոյ անուամբ,
երբէք այդ ժողովներուն մէջ Սոյ եւ Ազթամա-
րայ կաթուղիկոսութիւնք չէին վաւերացած . . .

ԱՏԵՆԱԳՐԵԱՆ Գ. ԷՖ. — (Ընդհանուր) Չե՞ր ըսած այդ
Ընդ՛. ժողովոյ նախբուն մէկուն մէջ, Ազթա-
մարայ հանդուցեալ Պետրոս կաթուղիկոսի ընա-
րութիւնն ու վաւերացումը կատարեցաւ, ուր
եւ անգամ լինելով ներկայ էի:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — (Երբեք չէի) Մինչ-
դեռ մեք մեր Սահմանադրութեան վերջ պաշտ-
պան կենալու եմք եւ մեր դործերն անոր սկզբ-
բանց համաձայն ըլլալու են, ահա՛ Վ.Կ. կա-
թուղիկոսը մեր Սահմանադրութեամբն զմեզ
կամբաստանէ, եւ տարակոյս չկայ որ ապագայ
պատմիչք այ պիտի այգանեն զմեզ . . .

ԱՂԱՔԷՌԵԱՆ Մ. ԷՖ. — (Աւիտարեւմտեան էֆ. -
-ողդի) Մի՛ բանդագու չէք, լուէ՛:

Ատենագրեալ էֆ. կազդարարէ Ազարեղեան էֆ. ի
թոյլ տալ ատենաբան էֆ. ին շարունակել իւր
խօսքը:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — (Երբեք չէի) Սրբ-
բազան Պատրիարքն ու Ընդ՛. ժողովն ամբաս-
տանութեան ներքեւ կը գտնուին. դուք կա-
թուղիկոսը սխալած ըլլայ, սակայն քանի որ
կամբաստանէ, այս ամբաստանութիւնը չճանչե-
լը՝ զբեզ կաթուղիկոս չեմք ճանչեր ըսել է.
ուստի այսպիսի ամբաստանութեան ներքեւ
Ընդ՛. ժողովն կրնայ դործել, թէ ո՛չ:

ԵՆՈՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — Խնդիր մը երեւան ե-

լաւ, որու առիթ տուած է 12 երեսփոխանաց հարցումը, զոր ուղղեցին Ս. Պատրիարքին: Ես Օղակէն էֆ. ի առ Օտեանէֆ. պատասխանած ժամանակ՝ Աղղ. Վարչութիւնն ակնարկող առարկութեանցը համար պիտի ըսեմ թէ՛ գլխովին ակար եւ անօգուտ փաստեր էին անոնք: Քաղ. ժողովոյ համար թերեւս սխալմամբ գործած է կրտէ Օղակէն էֆ. կը բողոքեմ այս խօսքերուն դէմ. զանոնք հոս յարուցանելու ալ տեղի չըկար վասն զի նոյն նստերու մէջ, ուր կաթուղիկոսական խնդիրն յուզեցաւ, բոլոր այս խօսքերն եղան: Ներկայ խնդիրը Վեհ. կաթուղիկոսէն առ Ս. Պատրիարքն եկած մասնաւոր հետազոյց մը վրայ է եւ որոյ պարունակութիւնը պարզապէս զգուշութեան հրաւէր մ'է. այդ հետազոյցն ո՞ր կէտէն հետեւցնելով կըսէք թէ՛ Ընդհ. ժողովն ամբաստանութեան տակ ինկած է: Ս. Պատրիարքն հետազոյցն պատասխան տուած է, երբ Վեհ. կաթուղիկոսն այն պատասխանաւ չհամոզուի, այն ատեն կրնայ թէ՛ Աղղ. Վարչութեան գրել եւ թէ՛ Ընդհ. ժողովոյն: Հոս, Ընդհ. ժողովոյն մէջ յուզելի խնդիր չեմ տեսներ. Եթէ մեք զմեզ ամբաստանեալ համարիմք, Վեհ. կաթուղիկոսն իրաւունք ունի մեզ ըսելու թէ՛ ես ե՞րբ ամբաստանեցի դձեղ:

Տ. Խորէն Եպիսկոպոսին նամակն ալ, որոյ համար յետս կոչուի ըսուեցաւ, յետս կոչուի էլ, այլ Վեհ. կաթուղիկոսէն առ ինքնեկած գրութիւնը Ընդհ. ժողովոյ հաղորդելու համար զԲբուած նամակ մը:

Օղակէն էֆ. կատարիէ թէ՛ կասկածներ ունին, վասն զի Վարչութիւնը չհրատարակեց հետազոյցն ու տրուած պատասխանը. զարմանալի՛ բան, ո՞ւր տեսնուած է որ սահմանադրական վարչութիւն մը ամեն գրութիւն եւ գործ անմիջապէս հրատարակութեան տայ:

Կատարաստանն թէ՛ նախ քան հաստատութիւն յարարութեանց եւ առանց կրօն. ժողով ունենալու Քաղ. ժողովն հոս բերեր է կաթուղիկոսի ընտրութիւնը. սակայն անոնք որ այդ ընտրութիւնը վաւերացուցին, այսինքն Ընդհ. ժողովոյ մեծագոյն ժասն, ի հարկէ ընդունեցան Քաղ. ժողովոյ մէջ բերած պատճառներն:

Վերջապէս Նախագահ Սրբազանի առաջարկութիւնը, զոր ժողովն ընդունեց, խիստ օրինաւոր էր. այն թէ՛ նախ կրօն. ժողովոյ ընտրութիւնը վատարկելու յետոյ յարարութեանց խըն-

դիրը ձեռք առնուլ: Այս որոշման ընդգծանալը նոյն իսկ կասկածանաց տեղի կուտայ:

Թէպէտ վեցեօթն երեսփոխանք խօսք ուզած էին եւ Տ. Խորէն Եպիսկոպոս անոնց վերջինն էր, եւ թէպէտ ատենը գոցելու ժամն անցած ըլլալով Ատենապետ էֆ. եւ ո՛չ մէկու խօսք պիտի տար, այսու աճնայնիւ Տ. Խորէն Եպիսկոպոսի առ ինքնուղղեալ գիտօգութեան պատասխանելու իրաւունքը նկատողութեան առնելով, Նախագահ Սրբազանի առաջարկութեամբ եւ մի քանի երեսփոխանաց տճանութեան ներքեւ Ատենապետ էֆ. խօսք տուաւ Տ. Խորէն Եպիսկոպոսին:

Տ. Խորէն Եպիսկոպոսին. Երեսփոխան էֆ. ներ, այսպիսի ծանր խնդրոյ վրայ յիրաւի ցաւալի է տեսնել որ երկուստեք կիրք կը յայտնեն. խնդիր մը երբ կրից նիւթ կըլլայ, չկրնար լուծուի առնուլ, եթէ անձնականութիւնը տեղի զըտնէ մեր ժողովոյն մէջ, մի՛ կարծէք որ կարենայ լաւ բան մը յառաջ գալ: Իմ մասին ալ կասկածներ երեւան ելան. տեսա՛ք ապաքէն թէ ի՞նչ անկեղծութեամբ միտքս բացատրեցի Սոյ կաթուղիկոսական ընտրութեան խնդրոյն վրայ. նոյն անկեղծութիւնն էր որ զիս քաջալերեց ո՛չ պաշտօնապէս այլ առանձինն իբր Էջմիածնաց Եպիսկոպոս եղելութեան պատճութիւնը գրել առ Վեհ. Հայրապետն. ցաւալի է ինձ որ այն նամակին պատճէնը չբերի այսօր հոս, եթէ բերէի պիտի տեսնէիք անոր մէջ իմ միեւնոյն անկեղծութիւնս:

Նախագահ Սրբազան զարմանք յայտնեց թէ՛ ի՞նչ պատճառաւ դրած ըլլամ եւ Նորին Վեհափառութիւնն ալ պատասխանած: Սակայն ո՞վ կրնար զիս գրելի իբր որդի հարազատ իմ հօրս հետ թղթակցելէ, ո՞վ կրնար արգելուլ որդիս հարազատ դիմել իմ հօրս, միթէ իմ թղթակցութիւնս արգելք էր որ Ս. Նախագահն ալ իր պարտքը կատարէր: Իմ գրած նամակէս շատ առաջ Վեհ. կաթուղիկոսը տեղեկութիւն առած էր գործոյն վրայ: Ես այս պարագային մէջ իմ որդիական պարտքս կատարեր եմ միայն, եւ բնաւին որ եւ է կերպիւ միջամտութիւն ունեցած չեմ Նորին Վեհափառութեան այս որոշման մէջ:

Գալով միւս խնդրոյն. յիրաւի Վեհ. կաթուղիկոսը կը պատուէ զիս յատուկ կոնդակաւ, բայց ինձ միայն գրելը չեմ կարծեր որ պակա-

սութիւն մը համարուի. ասի քաղաքավարական օրէնք մ'է մանաւանդ կարծեմ, որ ինձ զըրելու առթիւ իւր հայրական ձայնը հաղորդէ նաեւ առ եղբայրակիցս մեր: Ապա թէ ոչ, ես անարժան եկեղեցական մը, ես փոքր թաղի մը քարոզիչ, ի՞նչպէս կրնամ Պօլսոյ եկեղեցականներն իմ ազդեցութեանս ենթարկել. ձեր մըտախոհ կարծեաց առջեւ ալ անտեղի կերեւի այս հետեւութիւնը:

Ի բաց թողու մը այսպիսի կասկածներ, սիրտ սրտի տամք, դարերն այնպիսի կիճոսից խընդիրներ բերեր ձգեր են հոս, զորս ոչ թէ հակառակութեամբ՝ այլ իրարու հետ հաշտ եւ համաձայն, սրտագին սիրով եւ սիրտ միութեամբ կարող եմք լուծել:

Ներեցէ՛ք որ բուն խնդրոյն վրայ իմ տեսութիւնս ալ համառօտիւ յայտնեմ. ես ընաւ յետքս կոչուի չեմ ընել իմ կարծեացս զոր յայտնած եմ այն մասին. իմ առաջին փափաքս միութիւնն է, բայց երբ Վեհ. Հայրապետը կը խօսի, պարտական եմ ունկն դնել ուշի ուշով անոր հրամանաց, ուստի եւ այս պատճառաւ հարկ էր ինձ հաղորդել ժողովոյդ նորին Վեհափառութեան կոնդակը: Յիրաւի դժուարին վիճակի մէջ ինկած է այժմ խնդիրն, եթէ հետտեսութիւն եղած լինէր, թերեւս կարելի ըլլար Վեհ. կաթուղիկոսին հաւանութիւնն առնուլ. բայց հիմայ եղածն եղած է. մտածեմք թէ ի՞նչ պէտք է լինել: Վեհ. Հայրապետն իւր ձայնը լսելի ըրաւ մեզ. մեք ալ չեմք կրնար միութէ՞ իրաց վիճակը Նորին Վեհափառութեան ներկայացնել: Ուստի ես կառաջարկեմ որ սպասեմք մինչեւ որ Ս. Պատրիարքն իւր գրութեան պաշտօնական պատասխանն ստանայ Վեհ. կաթուղիկոսէն, եւ մինչեւ այն ատեն ոչինչ անօրէնութիւն ընեմք այս խնդրոյն վրայ: . . .

ՊԵՏԵԱՆ Թ. ԷՅ.— (Մէ-յոյն ընդհանրէլ) ԽՕՃԱՍՍԱՐԵԱՆ Օ. ԷՅ.— Զը գիտեմք թէ Ս. Պատրիարքն ինչ գրած է. կարելի է սխալ տեղեկութիւն հաղորդած ըլլայ:

Ատենապետ էֆ. կը լուցնէ ընդմիջող երեսփոխանները:

Տ. Խորէն Եպիսկոպոս. — (Շորա-ձեւէլ) Էֆէնտիներ, պահ մ'առաջ կը խնդրէի, դարձեալ կը խընդրեմ որ առանց կրից խօսիմք. ուր կիրք կայ հոն չիք ճշմարտութիւն:

Գառնալով խնդրոյն, քանի որ Վեհ. կաթուղիկոսն ուղղակի Ընդհ. ժողովոյ հետ թղթակցութիւնն է ունեցած, եւ քանի որ, ինչպէս Նախագահ Սրբազանն յայտնեց, պաշտօնական յարաբերութիւնը սկսած են Նորին Սրբազնութեան եւ Վեհ. Հայրապետի մէջ, սպասեմք ուրեմն գուցէ Վեհ. կաթուղիկոսն համոզուի, եւ զլուծութեանց եւ պարագայից մանրամասն տեղեկութիւններն առնելով. համբերեմք ուրեմն պահ մ'եւս, մինչեւ որ սպասեալ պատասխանն հասնի, եւ այն ատեն կրնամք զիտնալ թէ ի՞նչ պէտք է ընել. խնդիրն այժմէն խորհրդածութեան եւ վիճարանութեան նիւթ ընել՝ ոչ բանաւոր է եւ ոչ պատշաճ:


Իսկ իմ նամակիս գալով, եթէ կասկած յարուցանողներ կան, թո՛ղ հաղորդեն ինձ, որպէս զի լրագրաց միջոցաւ հրատարակեմ եւ տեսնեն զայն:

Ատենապետ էֆ. ժողովոյ ներկայացնել կուզէ երրորդ բացակայութիւն ունեցող մի քանի երեսփոխանաց անուանքը, որոց մէկ մասը նախորդ նստերէն մնացած էին, բայց երեսփոխանէրէն ոմանք Տ. Խորէն Եպիսկոպոսի յայտարարած կարծեաց վրայ զանազան խառնաշփոթ առաջարկութիւններ ընելու ելնելով Ատենապետ էֆ. ըստ որում օրը տարածամամ՝ Ատենապետ կը գոցէ ժամը 10 1/2ին:

ՓՈԹ ԱՏԵՆԱՊԵՏ ԱՏԵՆԱԳՊԻՐ Ք. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Հ. Յ. ՄԷՐԵԷՄ-ԳՈՒԼԻ

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page. The text is dense and covers most of the left half of the page.

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page. The text is dense and covers most of the right half of the page.



Blank rectangular area at the top of the page.

Blank rectangular area with faint, illegible markings.

Blank rectangular area with faint, illegible markings.

Blank rectangular area with faint, illegible markings.

Blank rectangular area with faint, illegible markings.



ԳԻՆ 2 ՂՐՈՒՇ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՍՆՏՈՒԿԻՆ

Կը ծախուի ի Դիւանատան Պատրիարքարանի , և կը գտնուի
Եկեղեցեաց բանկաները :